



Էլի եկան գարնան անհուշ օրերը,
Յուպս առնեմ, ընկնեմ սար ու ձորերը,—
Սիրտըս կ'ուզէ հեռունները սաւառնել,
Նոր ճամբէքներ, նոր աշխարհներ թափառել:

Սէգ ժէռերի վայրի, խոլոր բարձունքէն
Վարդեր քաղեմ ու ճակատս պսակեմ:
Սարերն ի վեր ամպերի պէս բարձրանամ,
Արծըւի հետ երուած կուրծքս հովին տամ:

Արևն ելաւ՝ ոսկի հուաքերն ուսերին,
Զառ հաւքերը իրար անհուշ ձէն տուին.
Սիրտըս, սիրտըս արտուտի պէս թռվռուն՝
Դէպի արևն, դէպի ճամբայ է թռնում:

Մարալները ցողաշաղախ սարն ելան,
Նրանց յետքից ոստոստելով սարն երթամ:
Խարոյկի շուրջ, հովիւների, հօտի քով,
Սէրս երգեմ՝ քաղցր շուին ծոր տալով:

Որտեղ մթնի, էնտեղ քնիմ միայնակ
Վառ աստղերի, կապոյտ երկնի ծածկի տակ.
Ուռիները հովերի հետ միասին
Ինձի մարմանդ օրօր կ'ասեն, որ քնեմ:

Ծեղը ինձի համբուրելով ձէն կը տայ,
 Կուրծքս լիքը թարմ բուրմունքով կը թնդայ,
 Ու կարկաջուն աղբուրների ցողերով
 Կը լուսցուիմ, և կը ճախրեմ նոր ճամբով:

Կերթամ հեռու անապատներ ու ծովեր,
 Կը թափառեմ, անյայտ վայրեր, աշխարհներ.—
 Ուրիշ ազգեր, ուրիշ սրտեր տեսնելու
 Ու ամենը հասկանալու, երգելու:

Եւ բնութեան հրաշքները կը տեսնեմ,
 Նրա լեզուն, հազար տեսակ, կը լսեմ;
 Ուրիշ երկինք, ուրիշ աստղեր գրկելու,
 Ու ամենը խորն զգալու, երգելու...

—Էյ, դու, անգին, թափառական, վսեմ կեանք,
 Հեռուների, անհունների իմ տենչանք.
 Քո շնորհիւ հըրեղէն եմ, թեաւոր.
 Աշխարհն իմս է, գլխիս տէրն եմ ու հղօր...

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ